ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM
SHARE

| | | | |
|---|---|---|---|
| *Համարը* | N 984-Ն | *Տեսակը* | Պաշտոնական Ինկորպորացիա |
| *Տիպը* | Որոշում | *Կարգավիճակը* | Գործում է |
| *Սկզբնաղբյուրը* | ՀՀՊՏ 2020.06.20/66(1621) Հոդ.823 | *Ընդունման վայրը* | Երևան |
| *Ընդունող մարմինը* | ՀՀ կառավարություն | *Ընդունման ամսաթիվը* | 18.06.2020 |
| *Ստորագրող մարմինը* | ՀՀ վարչապետ | *Ստորագրման ամսաթիվը* | 19.06.2020 |
| *Վավերացնող մարմինը* | | *Վավերացման ամսաթիվը* | |
| *Ուժի մեջ մտնելու ամսաթիվը* | 01.01.2021 | *Ուժը կորցնելու ամսաթիվը* | |

Ծանուցում
15.04.22 N 518-Ն որոշումն ունի անցումային դրույթ:

Կապեր այլ փաստաթղթերի հետ
Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ԵՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄԱՐԶԱԿԱՆ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԳԻՇԵՐԱՎԱՐՁԻ ՈՒ ՍՆՆԴԻ ՕՐԱԿԱՆ ՎՃԱՐԻ, ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐԻ ԵՎ ՄՐՑԱՎԱՐՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 հունիսի 2020 թվականի N 984-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ԵՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄԱՐԶԱԿԱՆ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԳԻՇԵՐԱՎԱՐՁԻ ՈՒ ՍՆՆԴԻ ՕՐԱԿԱՆ ՎՃԱՐԻ, ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐԻ ԵՎ ՄՐՑԱՎԱՐՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի «դ» կետի «դ.1» ենթակետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2020 թվականի ապրիլի 2-ի «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 408-Ա որոշման հավելվածի 1-ին կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության տարածքում պետական բյուջեի միջոցներով կազմակերպվող և անցկացվող մարզական զանգվածային միջոցառումների մասնակիցների գիշերավարձի ու սննդի օրական վճարի չափերը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության տարածքում պետական բյուջեի միջոցներով կազմակերպվող և անցկացվող մարզական զանգվածային միջոցառումների մրցանակակիրների և մրցավարների դրամական պարգևատրման չափերը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

**Հայաստանի Հանրապետության**
**վարչապետ**

**Ն. Փաշինյան**

2020 թ. հունիսի 19
Երևան

**Հավելված N 1**
**ՀՀ կառավարության 2020 թվականի**
**հունիսի 18-ի N 984-Ն որոշման**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ԵՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄԱՐԶԱԿԱՆ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԳԻՇԵՐԱՎԱՐՁԻ ՈՒ ՍՆՆԴԻ ՕՐԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՉԱՓԵՐ

1. Հայաստանի Հանրապետության տարածքում պետական բյուջեի միջոցներով կազմակերպվող և անցկացվող մարզական զանգվածային միջոցառումների մասնակիցների գիշերավարձի օրական չափերը հաստատել մեկ մասնակցի (մարզիկ, մրցավար, բժիշկ, ներկայացուցիչ, ուղեկցող՝ հաշմանդամություն ունեցող մարզիկի դեպքում) համար՝ մինչև 6800 դրամ՝ ծախսերը հաստատող փաստաթղթի առկայության դեպքում:

2. Հայաստանի Հանրապետության տարածքում պետական բյուջեի միջոցներով կազմակերպվող և անցկացվող մարզական զանգվածային միջոցառումների մասնակիցների սննդի ընդունման օրական վճարի չափերը հաստատել մեկ մասնակցի (մարզիկ, մրցավար, բժիշկ, ներկայացուցիչ, ուղեկցող՝ հաշմանդամություն ունեցող մարզիկի դեպքում) համար 3000 դրամ:

**Հայաստանի Հանրապետության**
**վարչապետի աշխատակազմի**
**ղեկավար**

**Է. Աղաջանյան**

**Հավելված N 2**
**ՀՀ կառավարության 2020 թվականի**
**հունիսի 18-ի N 984-Ն որոշման**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ԵՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄԱՐԶԱԿԱՆ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐԻ ԵՎ ՄՐՑԱՎԱՐՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության տարածքում պետական բյուջեի միջոցներով կազմակերպվող և անցկացվող մարզական զանգվածային միջոցառումների մրցանակակիրների դրամական պարգևատրման չափեր հաստատել.

1) ըստ անհատական հաշվարկի՝

(ՀՀ դրամ)

| NN | *Պարգևատրվողներ* | *1-ին տեղ* | *2-րդ տեղ* | *3-րդ տեղ* |
|---|---|---|---|---|
| *Համայնքային փուլի միջոցառում* | | | | |
| 1. | Մրցանակակիր | 7000 | 6000 | 5000 |
| | | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| *Մարզային փուլի միջոցառում* | | | | |
| **2.** | Մրցանակակիր | 12000 | 10000 | 8000 |
| *Հանրապետական փուլի միջոցառում* | | | | |
| **3.** | Մրցանակակիր | 45000 | 35000 | 25000 |

2) ըստ թիմային հաշվարկի՝

(ՀՀ դրամ)

| NN | *Պարգևատրվողներ* | *1-ին տեղ* | *2-րդ տեղ* | *3-րդ տեղ* |
|---|---|---|---|---|
| *Համայնքային փուլի միջոցառում* | | | | |
| **1.** | Մրցանակակիր թիմ, ընտանիք (հայր, մայր, երեխա) կամ մարզական զանգվածային միջոցառման մասնակից իրավաբանական անձ | մինչև 70000 | մինչև 60000 | մինչև 50000 |
| *Մարզային փուլի միջոցառում* | | | | |
| **2.** | Մրցանակակիր թիմ, ընտանիք (հայր, մայր, երեխա) կամ մարզական զանգվածային միջոցառման մասնակից իրավաբանական անձ | մինչև 120000 | մինչև 100000 | մինչև 80000 |
| *Հանրապետական փուլի միջոցառում* | | | | |
| **3.** | Մրցանակակիր թիմ, ընտանիք (հայր, մայր, երեխա) կամ մարզական զանգվածային միջոցառման մասնակից իրավաբանական անձ | մինչև 450000 | մինչև 350000 | մինչև 250000: |

2. Հայաստանի Հանրապետության տարածքում պետական բյուջեի միջոցներով կազմակերպվող և անցկացվող մարզական զանգվածային միջոցառումների հանրապետական փուլի մրցավարների դրամական պարգևատրման չափեր հաստատել՝ մեկ մրցավարի համար մինչև 20000 դրամ:

3. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության վարչապետի հովանու ներքո անցկացվող զանգվածային մարզական միջոցառումների մրցանակների չափը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նշված միջոցառումների համար նախատեսված հատկացումների շրջանակը:

***(3-րդ կետը լրաց. 15.04.22 N 518-Ն)***
***(հավելվածը լրաց. 15.04.22 N 518-Ն)***

**Հայաստանի Հանրապետության**
**վարչապետի աշխատակազմի**
**ղեկավար**

**Է. Աղաջանյան**